

ԱՐԴՅՈՔ ԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՈՐ ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒՄ

Գ. Ս. ԱՍԱՏՐՅԱՆ

Մենք չդիտենք, որն է ազդեցություն ունեցել է արդյոք հայերենը հին և միջին շրջանի իրանական լեզուների վրա¹, թե ոչ: Համենայն դեպս, այդ լեզուներով մեզ հասած հուշարձաններում ցարդ չի հաջողվել հայտնաբերել գեթ մի հայկաբանություն կամ հայերենի ազդեցության որևէ հետք²: Հայ-իրանական բազմադարյան առնչությունների բոլոր շրջաններում էլ (մանավանդ հին և միջին) հայերենը հիմնականում հանդես է եկել որպես recipient-ընդունող կողմ: Սույն իրողությունը բացատրվում է նրանով, որ մեր ժողովուրդը երկար ժամանակ (մոտ 16 դար) ապրել է իրանական ցեղերի կամ անմիջական հարևանությամբ, կամ էլ եղել է իրանից քաղաքական և մշակութային կախյալ վիճակում³: Սակայն, շնայած դրան, այնուհան-

¹ Հայ-իրանական լեզվական փոխհարաբերությունների պատմությունը կարելի է բաժանել երեք փուլի կամ շրջանի: Առաջին փուլ, որն ընդգրկում է մ. թ. ա. VI—V դդ. մինչև մ. թ. ա. III դարը, երկրորդ փուլ, որն ընդգրկում է մ. թ. ա. III դարից մինչև մ. թ. IX դարը, և երրորդ փուլ՝ IX դարից մինչև XV դարը, երբ հայ-իրանական անմիջական շփումները (շնորհիվ իրանի հյուսիսում այդ ժամանակ արդեն առաջացած թյուրքալեզու կայուն շերտի) վերջնականապես ընդհատվեցին: Այս շրջաբաժանումը հիմնված է, իրանական լեզուների՝ դիտության մեջ ընդունված, ժամանակագրական դասակարգման վրա: Ելնելով նպատակահարմարությունից, առաջարկված շրջաբաժանման մեջ չի ներառվել հայ-քրդական և հայ-զաղայական (քրդերը և զաղաները իրանալեզու ժողովուրդներ են) լեզվական փոխհարաբերությունների պատմությունը, որը հիմնականում սկիզբ է առնում XVI դարից (տե՛ս այդ մասին ծան. 3):

² Այն ենթադրությունը, ըստ որի հին իրան. *para-gauda- ձևը կարող է փոխառություն լինել հայ. պարեգաւմ-բ բառից (հմտ.՝ է. Բ. Ազալյան, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974, էջ 132—135) չի հաստատվում ո՛չ պատմական և ո՛չ էլ, առավել ևս, լեզվաբանական փաստերով (հին իրան. ձևի մասին տե՛ս մանրամասն՝ W. Hinz. Altiranisches Sprachgut der Nebenerlieferungen. Wiesbaden, 1975, S. 179):

³ Հայերենը արտասովոր հակվածություն է ի հայտ բերում դեպի տարբեր մշակութային ավանդույթներ կրող լեզվական նյութերի յուրացումն ու հարմարեցումը (տե՛ս G. Bolognesi. Tradition and Innovation in the Armenian Language.—In: Classical Armenian Culture. Pennsylvania, 1982, p. 125—142): Իրանական փոխառությունները հայերենում սովորաբար պահպանել են իրենց նախնական հնչյունական և իմաստաբանական առանձնահատկությունները այն դեպքում, երբ նրանց համապատասխանությունները մայր լեզուներում ենթարկվել են զգալի փոփոխությունների: Այսպիսով հայերենը հանգես է գալիս որպես ոչ միայն հայագիտության (և հնդեվրոպագիտության), այլև իրանագիտության օբյեկտ: Ինչն է, ճշմարտությունն այն է, որ հայերենը, փոխառելով իրանական լեզուներից հսկայական քանակությամբ լեզվական նյութ (բառամիավորներ, բառակազմական ձևեր և այլն), ինքը որևէ կոնկրետ ազդեցություն չի թողել այդ լեզուների վրա (տե՛ս P. Considine. A Semantic Approach to the Identification of Iranian Loanwords in Armenian.—In: Festschrift for O. Szemerényi, Amsterdam, 1979, p. 213—295; R. Schmitt. Iranisches Lehnwort im Armenischen.—REArm., 17, Paris, 1983, S. 73—112): Այնուհանդերձ խոսելով իրանական լեզուներում հայերենի ազդեցության բացակայության մասին, մենք նկատի չունենք նոր իրանական շրջանի լեզուների քրդերենը և զաղան, որոնք իրենց վրա են կրում հայերենի ազդեցության որոշակի կնիքը: Բավական է նշել, որ քրդերենը, ըստ մեր տեղի-

դերձ նոր պարսկերենում⁴ առկա են ծագմամբ հայկական մի քանի բառ-
 ձևեր, որոնց, ամբողջությամբ վերցրած, առաջին անգամ անդրադարձել է
 գերմանացի գիտնական Պաուլ Հորնը⁵։ Հետագայում, Հր. Աճառյանը փոր-
 ձեց իր որոշ աշխատանքներում ավելացնել պարսկերենում արդեն հայտնի
 հայկական փոխառությունների թիվը։ Սակայն նրա առաջարկած հինգ նոր
 ստուգաբանություններից առնվազն չորսը ենթակա են վերանայման։ Հայ-
 օսան բառը, օրինակ, նա դիտում է որպես նոր պարսկ. *gōsān* (կամ
osan) «գուսան, երաժիշտ» ձևի աղբյուր, հիմնավորելով իր կարծիքը նրա-
 նով, որ իբր պարսկ. բառը չունի վստահելի ստուգաբանություն, իսկ հայե-
 րենը, ըստ նրա, կարելի է բացատրել գովասան ձևից⁶։ Սույն բացատրու-
 թյունը, սակայն, խոցելի է երկու տեսանկյունից։ Նախ, պատմամշակութային
 առումով ոչ մի անհրաժեշտություն չի եղել հայերենից այս բառի փոխա-
 ռության համար, որովհետև թափառական երաժիշտների և գուսանների ինս-
 տիտուտը իրանում ունեցել է խոր արմատներ։ Ընդ որում իրանական լե-
 զուներում, մասնավորապես պարսկերենում, առկա է երաժիշտ կատարող-
 ների և նվագարանների բնիկ անվանումների բավական հարուստ համա-
 կարգ։ Եվ, ամենակարևորը, որ քննարկվող բառը հետագայում հայտնաբեր-
 վեց V դարի պարթևական մի քնագրում⁷ հանգամանք, որն արդեն ըստինք-
 յան բացառում է նրա հայկական ծագման Հր. Աճառյանի վարկածը⁷։ Հմմտ.

յալների, պարունակում է 273, իսկ զազան՝ մոտ 100 բառային հայկաբանություն՝ էլ չի ու-
 սելով քրդերենի և զազայի բառակազմական -*ḡ/x* (<հյ.-ող) ձևային մասին (տե՛ս
 մանրամասն՝ Գ. Ս. Ասատրյան, Գ. Ս. Մուրադյան, Գրաբարի- ալ անվա-
 նական վերջածանցը.— «Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 3, էջ 143, ծան. 43), ինչ-
 պես նաև այդ լեզուների հնչյունական համակարգի մասին, որը որոշակիորեն ազդված է
 լայերենից, Այդ հարցերի մանրամասն վերլուծությունը տրվում է մեր՝ հրատարակության
 պատրաստվող «Армянский и новоиранские языки: персидский, курдский, заза» մենա-
 գրության մեջ։ Առաջիկ հիշյալ խնդիրները արծարծված են մեր հետևյալ հրատարակված աշ-
 խատանքներում։ Գ. Ս. Ասատրյան. К вопросу об армянских лексических заимствова-
 ниях в курдском.—В кн.: Третья всесоюзная школа молодых востоковедов. Том II/2.
 Языкознание. М., 1984, с. 124—126. Գ. Ս. Ասատրյան. Հայկական փոխառություն-
 ները քրդերենում (ընդհանուր դիտողություններ).—Հայերենագիտական միջազգային երկրորդ
 գիտաժողով. զեկուցումների գրույթներ. Երևան, 1987, էջ 19—20. Գ. Ս. Ասատրյան.
 О ранних арменизмах в курдском.—Историко-филологический журнал, 1986, № 2,
 с. 168—175; Գ. Ս. Ասատրյան. Язык заза и армянский. (Предварительные заметки).—Ис-
 торико-филологический журнал, 1987, № 1, с. 159—171; G. S. Asatrian. N. Kh. Ge-
 vorgian. Zāzā Miscellany: Notes on some Religious Customs and Institutions.—In
 A Green Leaf. Papers in Honour of prof. J. P. Asmussen (Acta Iranica—28). Leiden-
 1988, p. 49—508; G. S. Asatrian, F. Vahman. Gleanings from Zāza Vocabu-
 lary.—In: Papers in Honour of prof. Ehsan Yarshater, Leiden, 1990, p. 267—275; Այդ
 խնդիրներին վերաբերող հարցերի հանրամատչելի շարադրանքը տե՛ս Գ. Ս. Ասատրյան.
 Հայ գիտաբաղաքական մտքի պատմությունից.—Ն. Ադոնց. Քրդերի ներթափանցումը Հա-
 յաստան.—«Երեկոյան Երևան», 20 մարտի 1990։

⁴ Նոր պարսկերենի զարգացման պատմությունը բաժանվում է երկու փուլի՝ դասական
 ճար պարսկերենի շրջան՝ IX—XV դդ. և ճար պարսկերենի կամ ժամանակակից պարսկերենի
 շրջան—XV դարից մինչև մեր օրերը։ Հիշյալ տերմինը (նոր պարսկերեն) օգտագործելով, մենք
 ի նկատի ունենք այդ լեզվի և՛ դասական, և՛ ժամանակակից շրջանը։

⁵ P. Horn. Neupersische Schriftsprache.—In: GPh I/2, Strassburg, 1898—1901, S. 8.

⁶ Հր. Աճառյան. Հայկական.—Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառա-
 րան. հ. 4, Երևան, 1979, էջ 629—630։

⁷ «Արմատական բառարան» համապատասխան հոդվածը գրելու ժամանակ այս փաստը
 Հր. Աճառյանին հայտնի չի եղել, սակայն նա չէր սխալվում՝ առաջարկելով հայ. գուսան
 բառի համար իրան. **gōsān* նախաձևը (տե՛ս Հր. Աճառյան. Հայերեն արմատական

cw'gwn gws'n(gōsān) ky hsyng'n šhrd'r'n 'wd kw'n hwnr wyf'r'syd
«Ինչպես մի գուսան, որը գովերգում է թագավորների և նախնյաց հերոսների
արժանիքները»⁹:

Այսպիսով, զուտաբար պատկանում է հայերենի պարթևական փոխա-
ռությունների թվին, ունենալով, ըստ որում, բնագրային վկայություն հիմք
լեզվում: Վրաց. mgosan «գուսան» բառը իր հերթին փոխառություն է հա-
յերենից⁹:

Պարթևերեն gosān բառը վստահելի ստուգաբանություն չունի: Մեր
կարծիքով, այն առաջացել է *gōsān ձևից, որն էլ իր հերթին հանգում է
հին իրան. *gaub- «խոսել, գովել» արմատից կազմված *gaub-s-āna-ինսոա-
տիվ հիմքով նախաձևին: Հմմտ. հին պարսկ. gaub- «խոսել» սողդ. ԴԿՅ-
«գովել», ԴԿՅԻՅ՝ «գովերգություն», հայ. գովել:

Նոր պարսկ. čug/čunda/ur «ճակնդեղ» բառը նույնպես Հր. Աճառյանը
հակված է համարելու փոխառություն հայերենից՝ հայ. ճակնդեղ ձևից¹⁰:
Այս ենթադրությունը նույնպես զուրկ է հիմքից, քանզի ինչպես ժամանակին
իրավամբ նշել է Հ. Հյուբշմանը¹¹, ինչպես նոր պարսկերեն, այնպես էլ հա-
յերեն բառաձևերը հանգում են միջին պարսկ. *čakundar նախաձևին, և որևէ
պատճառ չկա վերանայելու այս կարծիքը¹²:

Բացի այդ, նոր պարսկ. sanbalīl(a) բուսանունը Հր. Աճառյանը (դիտե-
լով sanbalīd ձևից անկախ) համարում էր փոխառություն հայերեն բրբռ.
շընքաղեղ ձևից¹³: Սակայն նոր պարսկ. երկու ձևերն էլ հանգում են միջին
պարսկ. šamb(a)līl(ak) բառին (որտեղից դասական հայ շամղիալ) և լալ-
նորեն տարածված են ժամանակակից իրանական բարբառներում: Հմմտ.՝
հարգանի šunbulla¹⁴, տաշիկերեն šallt, վախաներեն šllt, Շիրազի բարբա-
ռում šamīz և ալլն¹⁵: Բնականաբար, բոլոր այդ իրանական ձևերը չեն կա-
րող փոխառություն լինել հայերենից: Հայերեն շանբաղեղ և պարսկ. sanba-
līl(a) բառերի նմանությունը պատահական է:

Եվ, ի վերջո, նոր պարսկ. ք/κūi «հիմար, ապուշ» բառը, որը ըստ մե-
ծանուն հայագետի, փոխառություն է հայերեն գուլ «բուլ, ոչ սուր (դանակ),
բթամիտ» ձևից¹⁶: Հարկ է նշել, որ այս դեպքում Հր. Աճառյանը հաշվի չի
առել քննարկվող բառերի հնչախմբաստային (իդեոֆոնիկ) բնույթը, որը, բնա-
կանաբար, բացառում է ամեն մի փոխառության հնարավորություն: Ինչպես

բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 598): Ցավալի է, որ բազմալատակ հայագետը հետա-
գայում հրաժարվեց իր ճիշտ ենթադրությունից (տե՛ս նախորդ ծան.):

⁹ Տե՛ս՝ M. Boyce. The Parthian gosān and Iranian Minstrel Tradition.—JRAS
April, 1957, p. 11.

¹⁰ Նույն տեղում, էջ 15:

¹¹ Հր. Աճառյան. նշվ. աշխ., հ. 3, Երևան, 1977, էջ 176:

¹² H. Hübschmann. Armenische Grammatik. Leipzig, 1897, S. 186.

¹³ Տե՛ս նաև՝ G. Doerfer. Türkische und Mongolische Elemente im Neupersi-
schen. Bd III, Wiesbaden, 1967, № 1086.

¹⁴ Հր. Աճառյան. նշվ. աշխ., հտ. 1, էջ 398, հ. 3, էջ 492:

¹⁵ A. Karang. Tāi va harzani. Tehrān, 1955, s. 65.

¹⁶ Տե՛ս մանրամասն՝ B. Laufer. Sino-Iranica. Chinese Contribution to the
History of Civilization in Ancient Iran with special Reference to the History of Cul-
tivated Plants and Products. Tai-pel, 1967, p. 443—447; И. М. Стебляни-Каме-
нскій, Очерки по истории лексики памирских языков: Названия культурных растений.
М., 1982, с. 69.

¹⁷ Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 588:

հայտնի է, այս կարգի բառաձևերը, առաջանալով նույն հնչախմաստային հիմքի վրա, հաճախ տարբեր լեզուներում ունենում են միևնույն հնչյունական ձևավորում և իմաստ, ինչը երբեմն տեղի է տալիս թյուր ստուգաբանությունների: Հնչախմաստաբանական բնույթի բառաձևերի նկատմամբ չի կարելի կիրառել պատմահամեմատական ավանդական մեթոդի գիտական սկզբունքները¹⁷:

Արդ, կարելի է անցնել նոր պարսկերենում վկայված այն բառաձևերի քննարկմանը, որոնց հայկական ծագումը կասկած չի հարուցում:

1) *axiz* (أخيز) «աղյուս. աղյուս պատրաստելու փալտե կաղապար»¹⁸—

հայ. բրբռ. *աղիս ձևից, հմմտ. դասական հայ. աղիւս, միջին հայ. աղոյս¹⁹, Բառս շատ վաղ փոխառվել է նաև վրացերենում, հմմտ. *alizi* «աղյուս»:

2) *bargandan* (برغندان) «Ռամազանին նախորդող Շա-

աբան ամսվա վերջին օրը նշվող տոնակատարության անվանում. նույնպես այն գինին, որը խմում են այդ տոնի ժամանակ, որպեսզի կարողանան խոսափել նրանից ամբողջ Ռամազանի ընթացքում»²⁰: Այս բառը հանդիպում է ոչ միայն բառարանագրական հուշարձաններում, ինչպես գրում է Հր. Աճառյանը²¹, այլև պարսից դասական պոեզիայի նմուշներում՝ Բիրջանդի շրջանում ապրող, XIII դարի պարսիկ բանաստեղծ Նիղարիի²² ստեղծագործություններում: Հմմտ. *میر سداينک ده* شعباں است می یاريد «Ահա, մոտենում է Ռամազանը, Շաաբան ամսվա տասներորդ օրն է, գինի բերեք և խմեք, քանզի շուտով (գալու է) Բարդանդանը»²³:

Այս բառը հայերենից անցել է նաև քրդերենին (*bargandān* ձևով)²⁴, ոտիերենին (*p^caraganda* ձևով)²⁵ և թուրքերենին (հմմտ. թուրք. բրբռ. *pengerdenk*, *parçendank*, *parçundank* և այլն)²⁶:—հայ բրբռ. *բարգանգաճ(ք) ձևից, հմմտ. բարբկեղաճ²⁷:

17 Մանրամասն տե՛ս Գ. Ս. Ասատրյան. Суффиксальный элемент -l- и некоторые вопросы фоносемантики в армянском языке.—Историко-фил. журнал, 1988, № 2, с. 160—178.

18 S. V. , لغت نامه ، تالیف دهخدا ، تهران ۱۳۲۵ - ۱۳۵۸ (*հետազայում*՝ *Dehxoda*),

19 Հր. Աճառյան, Հոգ. աղիւ. հ. 1, էջ 130. J. Karst. Wörterbuch des Mittelharmenischen (ձեռագիր. պահվում է Մատենադարանում), s. v.

20 ۲۵۹ برهاں قاطع (*հետազայում*՝ *Borhān-e qāṭec*); *Dehxoda*, s. v. v. *برغندان* - جشن و نشاط را گویند که بسبب نزدیکی شدن ماه رمضان در آخرشای شعبان کنند (*Borhān-e qāṭec*, *ibid.*)

21 Հր. Աճառյան, նշվ. աղիւ. հ. 1, էջ 422:

22 Նրա մասին տե՛ս մանրամասն՝ J. Rycka. Iranische Literaturgeschichte. Leipzig, 1959, s. 248.

23 Այս տոնի մասին տե՛ս Գ. Ս. Ասատրյան, Н. Х. Геворгян. Некоторые материалы по этикету у персов—В кн.: Этикет народов Передней Азии. М., 1988, с. 156, 163; հմմտ. նաև՝ S. Wikander. Vayu. Texte und Untersuchungen zur Indo-Iranischen Religionsgeschichte. Teil 1. Uppsala, 1941, S. 64.

24 H. Maks. Kurdische Texte im Kurmānǝj-Dialekt aus der Gegend von Mār-dīn. Leningrad, 1924, S. 109; И. А. Орбели. Словарь курдского диалекта области Мокс (ձեռագիր), s. v.

25 H. Hübschmann, *ibid.*, S. 119.

26 Հր. Աճառյան, նշվ. աղիւ. հ. 1, էջ 422:

27 H. Hübschmann, *ibid.*, Հր. Աճառյան, նույն տեղում:

3) kūtān (کوتان) «գութան», հմմտ.՝ رعايا آنجا گاو و گاومیش و گوسفند بسیار نگاه میدارند خبانه هر جفت کدو که عبارت از کوتانست (Umezhi.—Գ. Ա.) գլուղացիները պահում են կով, գոմեշ և ոչխար, այնպես որ յուրաքանչյուր գութանին լծում են քսանչորս ցուլ և գոմեշ²⁸, Ըստ Ի. Պ. Պետրուշևսկու, kūtān բառը պարսկերենում ունի երկակի տերմինոլոգիական իմաստ՝ գութան և այնպիսի հողատարածություն, որը կարելի է գութանով մշակել մի օրվա ընթացքում²⁹, Այս բառը վկայված է նաև քրդերենում³⁰ և թուրքական բարբառներում³¹։ Փոխառություն է հայ. բրբռ. ֆութան ձևից, դասական հայ. գութան։ Բառիս ծագումը անհայտ է, սակայն այն լայնորեն տարածված է կովկասի տարածքի լեզուներում³²։ Բոլոր այն լեզուներում, որտեղ հանդիպում է այս բառը,—նշում է Վ. Ի. Աբաևը,—այն նշանակում է հողը վարելու համար հատուկ տիպի, առավել կատարելագործված գործիք՝ ի տարբերություն վարելու սովորական հարմարանքից, որի համար շատ հաճախ գոյություն ունեն բնիկ անվանումներ (հմմտ. հայ. արոտ—Գ. Ա.)³³, Վ. Ի. Աբաևի կարծիքով, սույն բառը ծագում է *kut-(<*skut) «սկյութ» ցեղային անվանումից՝ *kutan (<*skutan) «սկյութական» (արոր)³⁴։

4) pāzū (پازو) «բազուկ, ճակնդեղ»³⁵։—Հայ բրբռ.* փազու(կ'զ) ձևից, հմմտ. միջին հայերեն բազուկ, որն առաջացել է դասական հայերեն փազուկ «բազուկ, թև» բառի իմաստային զարգացումից³⁶, Վերջինս էլ իր հերթին փոխառություն է միջին պրսկ. bazūk (հմմտ.՝ նոր պրսկ. bāzū) «բազուկ, թև» ձևից³⁷։

Պրսկ. pāzū-ն համարվում է փոխառություն հայերենից՝ նախաձայն p-ի և բառիմաստի պատճառով, որը յուրահատուկ է միայն հայերենին։ Հայերենից է նաև թուրք. pazi «բազուկ»³⁸ ձևը։

²⁸ Scheref-Namch ou Histoire des Kourdes par Scheref, Prince de Bidlis. Publiée pour la première fois, traduite et annotée par V. Vellaminof-Zernof. Vol. 1, SPb., 1860, p. 353.

²⁹ И. П. Петрушевский. Очерки по истории феодальных отношений в Азербайджане в Армении в XVI—нач. XIX вв. Л., 1949, с. 175—176.

³⁰ Հմմտ. S. A. Rhea. Brief Grammar and Vocabulary of the Kurdish Language of the Hakari District.—JRAS, vol. X, 1872, p. 145; A. Jaba, F. Justi. Dictionnaire Kurde-Français. SPb., 1879, p. 345; F. Justi. Kurdische Grammatik. SPb., 1880, S. 49; A. Jaba. Recueil de Notices et Récits Kourdes. SPb., 1869, p. 113. С. А. Егiazаров. Краткий этнографический очерк курдов Эриванской губернии. Тифлис, 1891 (словарь), с. 11; И. А. Орбели, указ. соч.; Հ. Մոմճյան. Հայ լեզուն քուրդ բերնի մեջ և փոխադարձաբար. Պետք, 1950, էջ 40 և այլն։

³¹ Հ. Գաղանճյան. Հայերեն փոխառյալ բառեր թուրքերենի մեջ.—Հուլյարձան, Վիեննա, 1911, էջ 325—330; Հ. Աճառյան. Նշվ. աշխ. հ. 1, էջ 588; Խ. Պ. Ամիրյան. Հայերենից փոխառյալ բառերը արդի թուրքերենում.—Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 12, Երևան, 1985, էջ 143—152։

³² В. И. Абаев. Историко-этимологический словарь осетинского языка. Т. 1, М.—Л., 1958, с. 527.

³³ Նույն տեղում։

³⁴ Նույն տեղում։

³⁵ Հ. Աճառյան. Նշվ. աշխ., հ. 1, էջ 377։

³⁶ Նույն տեղում։

³⁷ Այս բառի ե նրա ստուգաբանության մասին տե՛ս մանրամասն՝ E. Benveniste. Essai sur la langue Ossète. Paris, 1959, p. 61—72.

³⁸ Д. А. Магазаник. Турецко-русский словарь. М., 1945, с. 484.

5) sam(v)ūrī (شامورتی) «խաբերա, սրիկա», šam(v)urī-bazī «խաբերախոթություն, սրիկախոթություն»³⁹, Այս բառը օգտագործվում է նաև «երաժշտական» (шарманка) իմաստով: Հմմտ.՝ یار وارسن سد شامورتی «یار وارسن را در افراد بازی را شروع کرد» (رسول پرویزی، فصه عینک) «հայ. բրբռ. շան ոտքի կազմութունից: Պարսկերեն բառը հանդիպում է միայն Թեհրանի բարբառում և փոխառվել է, ամենայն հավանականությամբ, իրանահայ խոսվածքից»:

6) хаč, хač (خاچ, خاج) «խաչ»⁴⁰, Օգտագործվում է նաև թուրքերենում՝ haç, хаç ձևով⁴¹, քրդերենում хаč, хaс ձևով⁴² և թաթերենում՝ хаč ձևով⁴³:—Հայ. լաչ բառից⁴⁴:

Այսպիսով, նոր պարսկերենում վկայված է ընդամենը վեց հայկական փոխառություն: Ընդ որում զրանց հիմնական մասը առկա է նաև հարևան լեզուներում՝ քրդերենում, թուրքերենում, թաթերենում, ուտիերենում և այլն: Այդ փոխառություններից միայն մեկն է (sam(v)ūrī), որը յուրահատուկ է պարսկերենին, այն էլ՝ սահմանափակ կիրառությամբ: Հիշյալ հայկական փոխառությունները, չնայած որևէ համակարգ չեն կազմում, սակայն աներկրայորեն վկայում են այն մասին, որ հայերենը նույնպես, թեկուզ ոչ շատ զգալի, բայց այնուհանդերձ թողել է իր հետքը նոր պարսկերեն լեզվում:

ИМЕЮТСЯ ЛИ АРМЯНСКИЕ ЗАИМСТВОВАНИЯ В НОВОПЕРСИДСКОМ?

Г. С. АСАТРЯН

Резюме

В статье впервые в совокупности рассматриваются новоперсидские формы армянского происхождения. В новоперсидском засвидетельствовано всего шесть достоверных арменизмов: āxiz (آخیز) .кирпич., baḡandaṇ (باغدان) .название праздника, kūā. (کوتان) .плуг, razū (راز) .репа, свекла, šām(v)ūrī (شامورتی) .плуг, мошенник и хāč/ (خاچ, خاج) .крест. При этом, все они, кроме šām(v)ūrī (отмеченного в тегеранском диалекте), встречаются и в соседних языках: курдском, турецком, грузинском, удинском и татском.

³⁹ Գրանցված է մեր կողմից:

⁴⁰ Dehḫodā, s. v.

⁴¹ H. Hübschmann, ibid., S. 158; հր. Ա հ ա ռ յ ա ն, նշվ. աղբ., հ. 2, էջ 334—335.

⁴² Տե՛ս մանրամասն՝ Г. С. Асатрян. О ранних арменизмах в курдском, с. 173.

⁴³ Вс. Миллер. Татские этюды, ч. 1, М., 1905, с. 72.

⁴⁴ Մանրամասն ստուգաբանությունը տե՛ս Հ. Ա հ ա ռ յ ա ն, նշվ. աղբ., հ. 2, էջ 334—335.